



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 41-ձ

«22» դեկտեմբեր 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 01-Ի N 01-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 01-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 01-Լ հրամանի 2-րդ կետը:
2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի փետրվարի 01-ի՝ «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարին կից աշակերտական խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին» N 01-Լ հրամանի հավելվածի.
 - 1) 3-րդ և 4-րդ կետերում «8-րդ, 9-րդ, 10-րդ և 11-րդ» թվերը փոխարինել «8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ» թվերով:
 - 2) 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ.
 - «7) Հանձնաժողովը, սույն կարգի 9-րդ կետով սահմանված համամասնությանը համապատասխան, վիճակահանության սկզբունքով ընտրում է խորհրդի անդամի

հավակնորդներ և ներկայացնում է համապատասխան լիազոր մարմնի ղեկավարին, ով հինգ աշխատանքային օրվա ընթացքում ընտրված հավակնորդների անունները գրությամբ ներկայացնում է Նախարարություն:

8) Ոչ պետական հաստատություններից սովորողների ընդգրկման գործընթացն իրականացվում է Նախարարության ենթակայությամբ գործող դպրոցների սովորողների ընտրության ընթացակարգով՝ Նախարարության կողմից:

9) Խորհուրդը կազմված է առավելագույնը 45 անդամից և ձևավորվում է ըստ ենթակայության հիմնական, միջնակարգ, ավագ հանրակրթական ուսումնական հաստատությունների ներկայացիչներից՝ հետևյալ համամասնությամբ՝

ա. Նախարարության ենթակայության՝ 5 անդամ,

բ. Երևանի քաղաքապետարանի ենթակայության՝ 5 անդամ,

գ. յուրաքանչյուր մարզից մարզային ենթակայության՝ 3-ական անդամ,

դ. ոչ պետական հաստատություններից՝ մինչև 5 անդամ:

10) Խորհրդի նախագահը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարն է (այսուհետ՝ Խորհրդի նախագահ):»:

3) 14-րդ կետում «2» թիվը փոխարինել «1» թվով:

ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԴՈՒՄԱՆՅԱՆ

 Восстановимая подпись

X



ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Подписано: DUMANYAN VAHRAM 1909620211